ԹԵՂԵՆՅԱՑ ՎԱՆՔԸ ԻԲՐԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Վ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Թեղենյաց վանքը, որ միջնադարյան Հայաստանի մշակութային նշանավոր օջախներից մեկն է եղել, գտնվում է Նաիրիի շրջանի Բուժական գյուղից[1] երեք կիլոմետր հյուսիս, թեղիներով շրջապատված բացատում։ Վանական այս համալիրը ճարտարապետական ինքնատիպ մտահղացմամբ բնությանը միաձուլված հուշարձան է, բաղկացած մի շարք շինություններից՝ կաթողիկե եկեղեցուց, դպրատուն-գրատնից, երկու գավիթներից, սեղանատնից, մատուներից։

Կաթողիկե եկեղեցին վանական համալիրի առաջին կառույցն է։ Եկեղեցու շինության ժամանակի վերին սահմանը XII դարի վերջն է՝ 1198 թ., երբ այստեղ գրիչներ Թադեոսը և Վարդանը ընդօրինակել են «Մեկնութիւն Յովհաննու ավետարանի» ժողովածուն։ Ժողովածուի հիշատակարանում նրանք գրել են. «Գրեցաւ ձեռամբ Թադէոսի և Վարդանայ... ի թուականիս Հայոց Ռխէ (1198), ի սուրբ յանապատիս Թեղենիս, ի սուրբ կաթողիկէ դրանս»[2]։ Եկեղեցին ամբողջովին ավերվել ու ծածկվել էր հողի մի քանի մետր հաստության շերտով։ Վերջին երկու տարվա ընթացքում այստեղ կատարված պեղումների շնորհիվ շինությունն ամբողջովին բացվել է[3]։ Լավ պահպանված հիմքերը թույլ են տալիս ասելու, որ կաթողիկե եկեղեցին միջին չափի կենտրոնագմբեթ շենք է։ Եկեղեցու սրածայր վեղարը նստած է եղել չորս հիմնասյունների թռիչքներից գոյացած շրջանաձև հիմքի վրա։ Պատերը շարված են կարմրագույն տուֆի լավ մշակված քարերով։ Պահպանվել են շքամուտքի (արևմտյան կողմում) և հարավային մուտքի ներքին հատվածները, որոնց վրա քանդականախշեր են փորագրված։

Համալիրի երկրորդ շինությունը՝ դպրատուն-գրատունը կառուցվել է կաթողիկե եկեղեցու հարավային կողմում՝ ամբողջ պատի երկարությամբ և եկեղեցու հետ հաղորդակցվում է հարավային մուտքով։ Այն ուղղանկյուն շենք է, ներսից բաժանված է երեք հատվածների։ Միջին մասը զբաղեցնում է միջանցքը, որը մի կողմից դռնով հաղորդակցվում է կաթողիկե եկեղեցու հետ, իսկ հարավային կողմում ելք ունի դեպի դուրս։ Շենքի արևելյան կողմում գտնվում են բարակ պատերով իրարից բաժանված երեք փոքր ավանդատներ, որոնք ունեն պայտաձև խորաններ և հավանաբար ծառայել են որպես գրչանոցներ։ Միջանցքի արևմտյան կողմում կառուցված են երկու սենյակներ, որոնցից մեկը ուղղանկյուն է, ընդարձակ, իսկ մյուսը՝ ավելի փոքր։ Շենքը մուգ կարմիր տուֆից է։ Դպրատուն-գրատան մուտքը նույնպես շքեղորեն հարդարված է. երկու կողմերում կան երկհատված գոգավոր կիսա-

---

1 Բուժական (նախկին Բաբաքիշի) գյուղը մտել է պատմական Նիգ գավառի (Ապարան) կազմի մեջ։ 1978 թ. հոկտեմբերի 25-ին ՀՍՍՀ Գերագույն սովետի հրամանագրով միացվել է Նաիրիի շրջանին։

2 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 371։

3 1980—1981 թթ. Թեղենյաց վանքում պեղումներ է կատարել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, վիմագրագետ Գ. Սարգսյանը։

սյուների հիմքեր։ Այս շինությունը ևս բացվել է պեղումների ընթացքում։ Հավանաբար դպրատուն-գրատունը կառուցվել է կաթողիկե եկեղեցու հետ միաժամանակ կամ մի փոքր ավելի ուշ, բայց բոլոր դեպքերում XII դարից ոչ ուշ։

Առաջին կիսականգուն գավիթը կառուցվել է կաթողիկե եկեղեցու արևմտյան կողմում։ Պահպանվել է կենտրոնական հատվածը, հարավային



Թեղենյաց վանքի համալիրը. 1. Կաթողիկե եկեղեցի։ 2. Գրատուն-դպրատուն։ 3. Առաջին գավիթ (1207)։ 4. երկրորդ գավիթ (XIII դ. սկիզբ)։ 5. Սեղանատուն (XIII դ. սկիզբ)։ Ձափագրությունը՝ Վ. Պետրոսյանցի

Թեղենյաց վանք. 1207 թ. Վահրամ Զավուշի կառուցած առաջին գավիթը

պատն ու գմբեթածածկը քանդված են։ Հյուսիսային պատի վրա կա շինության մեկենաս Վահրամ Զավուշի արձանագրությունը[4], որի համաձայն գավիթը կառուցվել է XIII դարի առաջին տասնամյակում։ Այն պատկանում է միջնադարյան Հայաստանում խիստ տարածված քառասյուն գավիթների տիպին։ Գորշ գույնի բազալտից պատրաստված, 91 սանտիմետր տրամագիծ ունեցող չորս սյուները իրենց վրա են կրել գավթի գմբեթածածկը։ Շինության ճարտարապետը վարպետորեն համադրել է սև և կարմիր տուֆը. ութանիստ գմբեթահիմքը հենց այդ գույների շախմատաձև տեղադրությամբ մեծ հնչեղություն է ձեռք բերել։ Այս գավթի կառուցվածքային առանձնահատկությունները ուսումնասիրել է Ս. Մնացականյանը[5]։

Երկրորդ գավիթը գտնվում է առաջինի հյուսիսային պատին կից։ Այն առայժմ ամբողջովին ծածկված է հողով։ Բացված են միայն սյուների մի մասն ու խոյակները։ Կարծում ենք, որ այս գավիթը կառուցվել է հիմնականում որպես ուսումնական մասնաշենք։ Այդպիսի ուսումնական մասնաշենք-գավիթներ են կառուցված Հաղբատում, Սանահնում, Սաղմոսավանքում։

Ինքնատիպ շինություններից է վանական համալիրի հյուսիսային կողմում գտնվող սեղանատունը, որի հյուսիսային պատն է միայն պահպանվել. կառուցվել է XIII դարում, հավանաբար մինչև 1230-ական թթ., մինչև մոնղոլական արշավանքները։ Պահպանված հատվածի հիման վրա կարելի է ասել,

---

4 Գ. Սարգսյան, Արձանագրություն Թեղենյաց վանքից, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1977, № 8, էջ 102։

5 С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, с. 37—39.

որ այն ներսից բաժանված է երեք մասի, թռիչքներն իրականացված են լավ մշակված բաղալտե կիսասյուներով և գորշավուն տուֆով։ Շենքի երկրորդական մասերում օգտագործվել են անմշակ քարեր[6]։ Վանքից երկու տասնյակ մետր դեպի արևելք, հողով ծածկված մատուռների շրջապատում երևում են կացարանների հիմքեր։ Վանքից հյուսիս, անտառի մեջ գտնվում է գերեզմանոցը։

Թեղենյաց վանքի մասին առաջին հիշատակությունը վերաբերում է VIII դարի առաջին քառորդին։ 727—728 թթ. այստեղ որոշ ժամանակ պատսպարվել է Վահան Գողթնեցին[7]։

Թեղենյաց վանքի մշակութային կյանքի մասին առաջինը հիշատակում է Ասողիկը։ Նա գրում է, որ իր ընկերներից Երեմիան Թեղենյաց վանքի վանահայրն էր, և այդ տարիներին վանքում ապրում ու ստեղծագործում էր Կիրակոս գիտնականը։ Ասողիկը գրում է. «Եւ Կիրակոս գծծակերպ գիտնականն, որ վարուք առաւել քան թէ բանիւք վարդապետէր. որ բնակէր յոլովակի յանապատին, որ Թեղենիսն կոչի, ի Նիգ գաւառի, առ հօր Երեմիայի ճրգնաւորին Քրիստոսի և ընկերակցի իմոյ»[8]։ Կիրակոս գիտնականի մասին մենք ուրիշ տեղեկություններ չունենք։

X դարի վերջերից սկսած Թեղենյաց վանքում գործել է դպրատուն-գրատուն։ Վանքի դպրանոցում ուսումնասիրվում էին աստվածաբանների, քերականների աշխատությունները, դրանց շուրջ ստեղծված մեկնողական երկերը։ Դպրանոցի ուսումնական ժողովածուներից մեկի մասին տեղեկություններ է տալիս Ղ. Ալիշանը։ Ձեռագիրը՝ «Մեկնութիւն Յովհաննու ավետարանի» ժողովածուն[9], ինչպես վերը նշվեց, 1198 թ. արտագրել են Թադեոս և Վարդան գրիչները։ Նրանք իրենց հիշատակարանում գրել են. «Կատարեցաւ հոգևնորոգ տառս մեկնութեան սուրբ աւետարանին Յովհաննու, զոր կարգեալ և ուղղեալ բազում աշխատութեամբ մեծի իմաստնոյ Սարգիս կոչեցեալ, աշակերտ երիցս երանեալ սուրբ վարդապետի Սարկաւագ կոչեցեալ, որ և նմա համոզեալ ի սոյն խորհրդի, ժողովեալ բանս պատշաճաւորս յաղագս օգտի լսողաց և ուսումնասիրացն ընթերցողաց։ Բայց հաւաքեալ են աստ բանք պիտանիք ի վարդապետութենէ Սրբոյն Եփրեմի, և Ոսկեբերանի, և Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց վերադիտողի, և ի տեղիս տեղիս՝ Աստուածաբանի, և Սարկաւագի, և Անանիայի, և Իգնատիոսի, և սկիզբն ի Նանաէ, սակաւ մի և ի Սեբերիանոսէ՝ ի մէջ քրիստոսասիրացն սուղ ինչ վկայութիւն»[10]։

Այս հիշատակարանից տեղեկանում ենք Թեղենյաց վանքում ստեղծագործած գիտնականի՝ Սարգիս Իմաստասերի մասին։ Նրա ուսուցիչը եղել է Սարկավագ վարդապետը, որի խորհրդով էլ Սարգիսը կազմել է «Մեկնութիւն Յովհաննու ավետարանի» ժողովածուն։ Հայտնի է, որ միջնադարի մեծագույն մտածողներից մեկը՝ գիտնական, փիլիսոփա, տոմարագետ, բանաս-

---

6 О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении (Жилье и общественные здания), М., 1971, с. 161—171.

7 «Ճառ սրբոց վկայիցն ճշմարտին Աստուծոյ... որ կոչի Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1706, էջ 622։ Վ. Մ. Պետրոսյանց, Թեղենյաց վանքը և նրա առաջնորդները, «Էջմիածին», 1977, օգոստոս, էջ 48։

8 «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 185։ Ասողիկն ապրել է X դարի վերջին և XI դարի սկզբին, հետևաբար Կիրակոս գիտնականը ևս ապրել է այդ ժամանակահատվածում։

9 Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 371։

10 Նույն տեղում։

տեղծ, մատենագետ Հովհաննես Իմաստասերը ևս կոչվել է Սարկավագ։ Նկատի ունենալով անունների այս նմանությունը, Ա. Գ. Աբրահամյանը «Հովհաննես Իմաստասերի մատենագիտությունը» աշխատության մեջ այն կարծիքն է հայտնել, որ Սարգիսը Հովհաննես Սարկավագի աշակերտն է[11]։ Բայց Հովհաննես Սարկավագի և հիշատակարանի Սարկավագ վարդապետի գործունեության ժամանակի զգալի տարբերությունը ստիպում է մտածել, որ նրանք տարբեր մարդիկ են։ Հովհաննես Սարկավագը մահացել է 1129 թ. և թաղվել է Հաղբատում։ Սարգիս Իմաստասերը գործել է դարի վերջին. 1198 թ. նրա կազմած, ուղղած, խմբագրած տեքստը արտագրել են Թադեոս և Վարդան գրիչները։ Այս թվականների միջև եղած տարբերությունն արդեն կազմում է 69 տարի՝ մի ամբողջ կյանք։ Ուրեմն Սարգիսը աշակերտեր Սարկավագին, առնվազն պետք է լիներ 20 տարեկան, ուսումն ավարտելիս՝ մոտ 26—27 տարեկան։ Նման դեպքում ժողովածուն կազմելիս նա արդեն մոտ 100 տարեկան մի մարդ պիտի լիներ, որ անհավանական է։ Հետևաբար, Հովհաննես Սարկավագին չպետք է նույնացնել Սարգիս Իմաստասերի ուսուցիչ Սարկավագ վարդապետի հետ։ Երկրորդ Սարկավագը հավանաբար գործում էր նաև ժողովածուն կազմելու ժամանակ՝ 1190-ական թթ.։ Միաժամանակ անհավանական է, որ ժողովածուն արտագրվելու ժամանակ Սարգիսը մահացած լիներ, քանի որ գրիչները հայտնում են, որ ժողովածուի նյութերը նա այդ ընթացքում է կազմել, ուղղել, խմբագրել։ 1198 թ. հիշատակված Սարգիս Իմաստասերը կարող է նույնը լինել Թեղենյաց վանքում 1168—1169 թթ. հիշված Սարգսի հետ։ Այս երկրորդ Սարգիսը 1168—1169 թթ. Թեղենյաց վանքում հյուրընկալել է Էպու Պէքր անունով պարսիկին, որ քրիստոնեություն էր ընդունել ու դարձել Հովսեփ Դվնեցի։ Ղ. Ալիշանը գրել է, որ Հովսեփ Դվնեցին «...թողլով ծնողաց տունը՝ նոր Վահանայ Գողթնացոյ մը նման՝ գնաց ուխտաւորի պէս այն ատենուն Հայոց ամեն երևելի վանքերը պտըտեցաւ. սկսեալ ի Թեղենեաց...»[12]։

Թեղենյաց վանքում պատշաճ կարգով պահվում էին հայկական եկեղեցու պաշտամունքային կարգերը. այն դեպքում, երբ ժամանակի մյուս եկեղեցիներում դրանք խախտվել կամ մի կողմ էին թողնվել։ XII դարի երկրորդ կեսին Ներսես Շնորհալին (1166—1173) որոշում է ուղղել հայկական եկեղեցու խաթարված ժամակարգը։ Կաթողիկոսը տեղեկանում է, որ հայոց հայրապետների կարգադրությունները հավատարմորեն պահվում են Մեծ Հայքի երկու վանքերում՝ Թեղենյաց և Մաքենացոց վանքերում։ Ներսես Շնորհալին, քննելով Թեղենյաց և Մաքենացոց վանքերի ժամակարգերը, լրացնում է, ամբողջացնում և հանձնարարում համայն հայկական եկեղեցիներին. «...Իսկ Թեղենիք՝ Նիգ գաւառին մէջ էր, Երևանայ մօտերը, որ և աւելի անցուդարձի տեղ ըլլալով՝ աւելի ալ ոտնակոխ, եւս իր ամենէն պայծառ ատենն էր։ Այս երկու վանքերուն (Թեղենյաց և Մաքենացոց—Վ. Պ.) և ուրիշ տեղեաց արարողութիւնները բաղդատելով. «և ամենայնիւ կամօք հաճեալ և հաւանեալ, զպակասն ելից և զսխալն ուղղեաց, և կարդեաց ամենայն Հայաստանեայց եկեղեցւոց՝ անջրելի և հաստատուն աւանդ...»[13]։

---

11 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագիտությունը, Երևան, 1956, էջ 29։

12 Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 390։

13 Նույն տեղում, էջ 442։

XIII դարի սկզբներին Թեղենյաց վանքը ղեկավարում էր ժամանակի նշանավոր ու ճանաչված վարդապետներից մեկը՝ Տուրքիկ վարդապետը, որի մասին տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցին։ Ինչպես հայտնի է, 1205 թ. Զաքարե Բ Մեծը Լոռի քաղաքում գումարում է Արևելյան Հայաստանի եկեղեցականների ժողով՝ հաստատելու համար Սսի եկեղեցական ժողովի որոշումներն ու կանոնները շարժական սեղանի թույլտվության մասին, որպեսզի զորականները ևս պատարագի հնարավորություն ունենան։ Լոռիի ժողովին մասնակցում են ժամանակի բոլոր նշանավոր եկեղեցական, հասարակական գործիչները։ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ Մխիթար Գոշի, Իգնատիոսի, Դավթի, Հովհաննեսի և մյուսների հետ այդ ժողովին մասնակցում էր նաև «Տուրքիկն ի Թեղենացն, որ բարւոք կարդաւորեաց զվանքն՝ զամենայն ինչ հասարակաց լինել և առանձին ոչ ինչ ստանալ»։ Հայտնի է, որ եկեղեցական գործիչներն անմիաբանություն հանդես բերեցին և, առանց որևէ գործնական եզրակացության հանգելու, ցրվեցին։ Երկու տարի անց, 1207 թ. Զաքարե Բ-ն եկեղեցական նոր ժողով է գումարում իր աթոռանիստ Անի քաղաքում։ Կիրակոս Գանձակեցին այս անգամ չի նշում ժողովի մասնակիցների անունները, այլ գրում է, որ Զաքարե Բ-ի հրամանով Անիում «ժողովեցան վերոգրեալ եպիսկոպոսքն և վարդապետքն և ևս յոլովք»[14]։ Հետևում է, որ Լոռիի ժողովի բոլոր մասնակիցները, այդ թվում Տուրքիկ վարդապետը, մասնակցել են նաև Անիի ժողովին։

Տուրքիկ վարդապետի օրոք է կառուցվել Թեղենյաց վանքի առաջին կամ հիմնական գավիթը։ Գավթի կառուցման պատիվը պատկանում է Վահրամ Զավուշին։ Այդ մասին տեղեկանում ենք գավթի հյուսիսային պատի վերին աջ անկյունում 1207 թ. (երբ գումարվել է Անիի ժողովը) փորագրված արձանագրությունից. «Ի թուականութե[ան]ս հայոց ՈԾԶ (1207)։ Ես՝ Վահրամ Զաւուշ, որդի Պատրոնկան էտու [յ]արդեանց իմոց աւգնութ[եա]ն ի շինութ[եա]ն գաւթին...»[15]։ 1211 թ. Թեղենյաց վանքին նվերներ է տվել Երկրամասի նոր տիրակալ Վաչե Վաչուտյանի կինը՝ Մամախաթուն իշխանուհին։ Հենց այս թվականներն էլ (1207—1211) ամենայն հավանականությամբ պետք է լինեն գավթի կառուցման և օծման տարիները։

Առաջին գավթի կառուցումը՝ վանքի ընդարձակումը, ենթադրել է տալիս, որ այդ ժամանակ վանքի միաբանությունը բավական մեծաթիվ էր։ Հավանաբար հենց այդ ժամանակ է առաջացել նաև երկրորդ գավթի և սեղանատան անհրաժեշտությունը, որոնք կառուցվել են կա՛մ առաջին գավթի հետ միաժամանակ, կա՛մ անմիջապես հետո։

Թեղենյաց վանքում իրենց գործունեությունն են ծավալել մեր մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Վանական վարդապետը (1246 թ. հետո) և Վարդան Արևելցին։ Վերջինս 1267 թ. այստեղ է փոխադրվել իր դպրոցի հետ։ Վարդան Արևելցու աշակերտներից Գևորգ Սկևռացին Թեղենյաց վանքում ավարտած ձեռագրի հիշատակարանում գրել է. «Եւ անտի (Խոր Վիրապից—Վ. Պ.) փոխեալ եկեալ առ մեծ իշխանն Քուրդ՝ և մեր զկնի նորա հետեւեալ ժամանակ ինչ արարաք յանուանեալն Սաղմոսավանք, ուր և զառաջինն աւարտեցաք հատոր երրոյ մատենիս։ Եւ քանզի դէպ լինէր և անտի ևս փոխիլ նմա ի գործ բարւոք ուսուցչութեանն ի տեղի ուր տէր յաջողեսցէ՝ յու-

---

14 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 171—172, 174։

15 Գ. Սարգսյան, Արձանագրություն Թեղենյաց վանքից, էջ 102։

զարկեալք եղէալ մեր ի ստացողէ տառիս ի բուն տունս իւրեանց ի մեծահռչակ հրեշտակակրաւն աստուածաբնակ սուրբ ուխտս Թեղինեաց, ուր և յանկ իսկ հանաք զառաջարկեալս, բարւոք ընկալեալ զմեզ բարեբարոյ և սրբասէր քահանայի Սարգսի, սիրով և յաւժարամիտ կամաւք սպասաւորելով, զոր աղաչեմ յիշման բարւոյ սրժանի տունել...»[16]։

Գևորգ Սկևռացին Թեղենյաց վանքում զբաղվել է ձեռագրի կատարելագործմամբ։ Վերը բերված հիշատակարանում նա նշում է, որ այդ գործում իրեն օգնել է Սարգիս քահանան։

Գևորգ Սկևռացու հիշատակարանում նշված է, որ որտեղ էլ հաստատվել է ուսուցչապետ Վարդան Արևելցին, ծավալել է մանկավարժական աշխատանք։ Հիշատակարանից իմացվում է նաև, որ ձեռագրի երկրորդ մասն ամբողջովին գրվել է Թեղենյաց վանքում։ Այդ ձեռագրի մասին Գալուստ Տեր-Մկրտչյանը գրում է. «Ընտիր գրչություն է, բոլորգիր, գլխակարգությունները կարմրագեղով»[17]։ Ձեռագրի Թեղենյաց վանքում ստեղծված մասում (474բ թերթ) Գևորգ Սկևռացին զետեղել է լեզվի և հատկապես կազմության տեսակետից ինքնատիպ մի ոտանավոր-ակրոստիքոս։ Ոտանավորի առաջին սյան յուրաքանչյուր երկրորդ տողի առաջին տառերով կարդացվում է «ԳԵՈՐԳ ՊԱՏԱՆԻՆ Է ԳՐԵԱՑ», երրորդ սյան նույն տողերի վերջին տառերով՝ «ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՊԷՏԻՆ»[18]։ Գևորդ Սկևռացու ձեռագիր մատյանն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում[19]։ Ձեռագրի ավարտի թվականը՝ 1267, միաժամանակ թույլ է տալիս եզրակացնելու, որ Վարդան Արևելցին իր հայտնի «Մեկնութիւն Դանիելի մարգարէի» գործը մասամբ գրել է Թեղենյաց վանքում։

Թեղենյաց վանքի դպրանոցի հայտնի շրջանավարտներից է գրիչ, բանաստեղծ Տերտեր Երևանցին[20]։ Նրա ուսումնառության տարիները կարող են տատանվել 1310—1320-ական թթ. միջև։ Այդ շրջանում վանքի դպրանոցը ղեկավարել է Հակոբ վարդապետը[21]։ Մոնղոլական բռնատիրության օրավուր սաստկացող հալածանքները Տերտերին ևս ստիպում են բռնելու պանդխտության ուղին։ 1330—1340-ական թթ. նա ապրում է Ղրիմի տարբեր քաղաքներում և հիմնականում զբաղվում է ձեռագրերի ընդօրինակությամբ։ Տերտերը 1336 թ. Սուրխաթ քաղաքում արտագրում է «Ժողովածու քարոզից Վարդանայ Այգեկցւոյ», «Ժողովածու խրատուց», «Քարոզգիրք Վարդանայ Այգեկցւոյ», 1341 թ. Ալախ քաղաքում՝ «Քարոզգիրք Վարդանայ Այգեկցւոյ» ժողովածուները։ Այդ ձեռագրերն այժմ պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում[22]։ Տերտեր Երևանցին գրել է մի հետաքրքրական պոեմ՝ խաղողի, գինու և իմաստասերի վիճաբանության մասին[23]։

16 Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 282։

17 Նույն տեղում, էջ 278։

18 Նույն տեղում, էջ 280։

19 «Ցուցակ ձեռագրաց Երևանի Մատենադարանի», հ. Ա, Երևան, 1965, էջ 1252։

20 «Հայ ժողովրդի պատմություն», հ. 3, Երևան, 1976, էջ 865։

21 Հավանաբար այս նույն Հակոբ վարդապետն է Թեղենյաց վանքի արևմտյան կողմում, ձորալանջի փոքրիկ բացատում խաչքար կանգնեցրել, որի պահպանված պատվանդանին փորագրված է. «Այս նշան Տեառն Հիսուսի խաչն արքային կանգնեալ ի բարեխաւսութեն Հակոբոս վարդապետին»։ Արձանագրությունը մեզ է տրամադրել Գ. Սարգսյանը։

22 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ 1654, 8029, 8030, 8281։ Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950, էջ 286—288, 328—329։

23 «Հայ ժողովրդի պատմություն» հ. 3, էջ 865։

Թեղենյաց վանքում գործել են շատ գրիչներ։ XIII դարի առաջին կեսի վերջից և երկրորդ կեսից հայտնի են Նահապետը, Քահանան, Շմավոնը, Դավիթը[24]։ Քահանան և Շմավոնը եղբայրներ են, իսկ Նահապետը նրանց հորեղբայրն է։ Նահապետն է վանքի կամարների տակ սնուցել նրանց, հասցրել քահանայության աստիճանի։ Երբ Նահապետը մահացել է, եղբոր որդիները նրա գերեզմանին գեղաքանդակ խաչքար են կանգնեցրել։ Թեև խաչքարը կոտրված, մասերի է բաժանված, բայց լավ պահպանվել է խաչքարի պատվանդանը, որի վրա փորագրված է. Ի թվ[ին] ՉԺԵ (1266)։ Յուսով անմահին / Ա[ստուծո]յ Քահանայս եւ եղբայ[ր իմ Շ] / մաւոն կանկնեցաք զխաչս ի բար/էխաւսութ[ի]ւն Նահապ[ետ]ին և մեզ։ Որք/կարդայք զմեզ յիշեցէք ի Ք[րիստո]ս։

Նահապետի մահից՝ 1266 թ. հետո, նրա հիշատակը հավերժացնելու նպատակով, Քահանան սկսում է ավետարան ընդօրինակել, սակայն չի հասցնում ձեռագիրն ավարտել՝ մահանում է։ Եղբոր գործը շարունակում է Շմավոնը։ Նրան օգնում է Դավիթ կրոնավորը։ 1295 թ. նրանք միասին ավարտում են ավետարանի ընդօրինակությունը[25]։ Ձեռագիրն այժմ պահվում է Բրիտանական թանգարանում[26]։

1302 թ. Մկրտիչ Բաբունին Թեղենյաց վանքում ընդօրինակում է «Մեկնութիւն սաղմոսաց Ներսիսի Լամբրոնացւոյ» գրչագիր աշխատությունը։ Այս ձեռագիրը մի մեծ հատոր է (673 թերթ, 21×14 սմ), գիրը՝ միասյուն, բոլորգիր։ Թուղթը օսլայած է։ Խոսելով այդ գրչագիր ժողովածուի գրվելու հանգամանքների մասին, Մկրտիչ Բաբունին նշում է, որ այն սկսել են գրել միջնադարի հռչակավոր մշակութային օջախներից մեկում՝ Գլաձորում, ուսուցչապետ Եսայի Նչեցու հանձնարարությամբ։ Ձեռագրի առաջին գրիչը՝ Հովհաննես Երզնկացին գրել է միայն Ներսես Լամբրոնացու սաղմոսների մեկնության մի մասը։ Այդ գլխի շարունակության մի փոքրիկ մասն էլ գրել են Վարդան Երզնկացի և Վարդան Կիլիկեցի գրիչները։ Մնացած ամբողջ աշխատանքը կատարել է Մկրտիչ Բաբունին[27]։ Իր մասին նա ընդամենը հետևյալն է հայտնում. «Թարմատար և անարհեստ գրչի Մկրտիչ կոչեցեալ. անուամբ միայն բաբի, ի սոյն անապատէ» (խոսքը Թեղենյաց վանքի մասին է—Վ. Պ.)։ Այս փոքրիկ տեղեկությունը թույլ է տալիս ասելու, որ Մկրտիչը եղել է բաբունի, այսինքն վարդապետ-ուսուցիչ։ Գարեգին Հովսեփյանը, հենվելով Մկրտիչ Բաբունու հայտնած այն տեղեկության վրա, որ ինքը աշխատության գրչագրությունը հանձն է առել միայն այն պատճառով, որ վայելել է մեծ ուսուցչապետի հովանավորությունը և չի կարողացել հրաժարվել նրա խնդիր-պահանջից, եզրակացրել է, որ նա Գլաձորի համալսարանի սաներից է։ Բայց ավելի հավանական է, որ Մկրտիչը լիներ հենց Թեղենյաց վանքի դպրանոցի սաներից։ Չի բացառվում, որ Թեղենյաց վանքի դպրանոցն ավարտելուց հետո Մկրտիչը կարող էր վարդապետական կոչման համար պատրաստության որոշակի շրջան անցնել Գլաձորի համալսարանում և վայելել Եսայի Նչեցու «յոլով խնամս»։

---

24 Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Անձնանունների բառարան, Երևան, հ. Բ, 1944, էջ 45, հ. Դ, 1948, էջ 168, հ. Ե, 1962, էջ 213—214։

25 „A Catalogue of the Armenian manuscripts an the British Museum", by F. C. Conibeare, London, 1913, p. 16.

26 Նույն տեղում, էջ 17։

27 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 5—7։

Անդրադառնալով այդ ձեռագրին Գ. Հովսեփյանը գրել է. «Հակառակ յուր համեստութեան, երևում է ոչ համբակ, այլ արդեն «ռաբի» (ռաբունի), այսինքն վարդապետ-ուսուցիչ և գրչության մեջ ընտիր և անսխալ... Հիշատակարանի շարադրությունը մաքուր և լավ գրաբարով, հրահանգված մտքի արդյունք, իսկ գրչությունը գեղեցիկ»[28]։

Մկրտիչ Ռաբունին իր ընդարձակ հիշատակարանի վերջում հետաքրքիր տեղեկություն է հայտնում Թեղենյաց վանքի մասին։ Նա նշում է, որ աշխատությունն արտագրելու ընթացքում, այլ հանգամանքների շարքում, իրեն խանգարել է «...ես և աղմուկ զրուցաց յոլով լինէր մերձ իմ, յորմէ սխալէի, վասն որոյ և ոչ կարողանայաք ճահողակի հանդիպիլ ի գործ արհեստիս»։ Հետևում է, որ այդ ժամանակ՝ XIV դարի սկզբներին ևս Թեղենյաց միաբանությունը մեծ էր, այդտեղ այնքան վանականներ, գրիչներ, դպրանոցում սովորողներ կային, որ նրանց զրույցները խանգարում էին Մկրտիչ Ռաբունուն հաճախակի զբաղվելու իր արհեստով՝ գրչությամբ։ Այս գրչագիր մատյանն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում և կրում է 6558 թվահամարը[29]։

Պահպանված հատուկենտ ձեռագրերի հիշատակարաններից իմացվում է, որ դրանց գրվելուն նպաստել են քահանաներ Սարգիսը, երկու Հովհաննեսները, Վրթանեսը, դպիր Սարգիսը։ Մկրտիչ Ռաբունին իր հիշատակարանի վերջում ընթերցողներից խնդրում է «Յիշեսջիք, աղաչեմ և զՅովանէս և զՎրթանէս սրբասէր քահանայք, որք և հարազատք [են] իմ և սպասաւորք, ես և զպատանիս՝ զՍարգիս դպիր, որ յոլով սպասաւորեաց մեզ»[30]։

XIII—XIV դդ. Թեղենյաց վանքի հռչակը մեծ էր։ Գևորգ Սկևռացին այն անվանում է «մեծահռչակ հրեշտակակրաւն աստուածաբնակ սուրբ ուխտս Թեղինեաց»։ Մկրտիչ Ռաբունին այն կոչում է «գերահռչակ սուրբ ուխտս»։

Գավթի պատերին, եկեղեցու քարերին շատ նվիրատվական արձանագրություններ են փորագրված։ Նվիրատուների թվում են Քուրդ Վաչուտյանն ու իր կին Խորիշահը, Վեցիկը[31], Հովհաննես Խաչենցին, Խնկիկը, Սաթերը, Սրմբատի որդի Քուրդը և իր կին Տիկնաց տիկինը (1360)։ Վանքի գերեզմանոցում են թաղված Սարգիս երեցը (+1090), Վարդան քահանան «որ էր ի Կէսարացոց գաւառեն» (+1210), Բռնան (+1224), Հայրապետ քահանան (+1278), Էրկաթի որդի Հովհաննես կրոնավոր Լոռեցին, Գորգ քահանա Վայոդեցին, մեկ այլ Վարդան քահանա, որի տապանաքարը կամ տապանագիրը պատրաստողը փակագրով թողել է իր անունը՝ Վարդ։ Գերեզմանոցում ընկած է մի արտակարգ գեղեցիկ խաչքարի բեկոր, որի վրա փորագրված է. «Տ[է]ր Յ[իսու]ս. ողորմի է Էլպէքի եւ ըՍտէփանոսի յորոյ անուն հշանքս են»։ Գերեզմանոցում մի գեղեցիկ որմնափակ խաչքար է կանգնեցված։ Խաչքարի արձանագրության սկիզբը ջարդված է և դժվար է ասել շարունակության մեջ հիշատակված Մխիթար վարդապե՞տն է այդտեղ թաղված, թե՞ նա է

---

28 Գարեգին Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, Անթիլիաս, 1969, էջ 262—263։

29 «Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», հ. Բ, Երևան, 1970, էջ 344։

30 «Ժ'Ա դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 7։

31 Հավանաբար նվիրատու Վեցիկը Կեչառիսում շինարարական աշխատանքներ կատարած Վեցիկ ճարտարապետն է։ Վեցիկի արձանագրությունը փորագրված է գավթի հյուսիսային պատին, բարձրից։ Ահա այն. «[Վե]ցիկ եառու իմ դրամագին.... ի սուրբ ուխտս Թեղենեաց.... կարգեցին Բ աւր.... ետ Զատկին շաբաթն.... իմ կատարեն։ Կատարիչք աւրհնեալ լիցին յԱստուծոյ» (տողերի սկզբնատառերը հողմնահարված են)։

կանգնեցրել խաչքարը։ Արձանագրության թվականը նշող տառերից հարյուրավորը՝ Ռ-ն, լավ պահպանված Ի. տասնավորը տառահեռքով վերականգնվում է Կ, միավորը կարող է տատանվել Ա—Թ-ի միջև (1—9)։ Այսպիսով, խաչքարը կանգնեցնելու թվականը կարող է լինել 1212—1220-ի միջև։ Վանքի գերեզմանոցում, ի թիվս հոգևոր գործիչների, թաղված է նաև աշխարհիկ անձնավորություն։ Նրա տապանաքարի վրա փորագրված է. «Զ Պատրիկ մեղապարտ ծառա Ք[րիստոս]ի յաշխարհիկ կարգե յիշեցէք ի Ք[րիստո]ս»։

Մխիթար վարդապետի որմնափակ խաչքարի արձանագրությունը

Թեղենյաց մշակութային օջախի մասին տեղեկությունները դադարում են XIV դարի երկրորդ կեսի սկզբներից, այն պահից, երբ պատմության թատերաբեմից հեռացան երկրամասի տերերը՝ վանքի հովանավոր Վաչուտյան իշխանները (մոտ 1350—1360-ական թթ.)։

Թեև Արմաշի վանքի № 11 ձեռագրում[32], որ ստեղծվել է 1597—1604 թթ., խոսվում է նաև Թեղենյաց վանքի մասին, բայց պետք է կարծել, որ այդ ժամանակ այն այլևս նախկին փառքն ու հռչակը չուներ։

МОНАСТЫРЬ ТЕГЕНЯЦ КАК КУЛЬТУРНЫЙ ЦЕНТР

В. М. ПЕТРОСЯНЦ

(Резюме)

Монастырь Тегеняц находится в Наирийском районе, вблизи селения Бужакан (бывш. Бабакиши, историческая провинция Ниг). В монастырский комплекс входили купольная церковь, книгохранилище, два притвора, трапезная и часовня. Здесь жили философы и ученые Киракос Гцакерп (начало XI в.), Саргис Имастасер (XII в.), Вардан Аревелци, Ванакан Вардапет (XIII в.), Акоб или Акобос Вардапет, Мкртич Рабуни (начало XIV в.); учились Геворг Скевраци, Тертер Ереванци и другие. Здесь трудились десятки писцов. Созданные ими книги хранятся в Матенадаране, в Британском музее.

32 Ց. Թոփչյան, Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, 1962, էջ 54։